



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«27» 03 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 035 - 24

Ձեռնարկողը՝

«Բազալտ Բար» ՍՊԸ

Կոտայքի մարզ, Հրազդան, Կենտրոն 44Ա, 7

Գործունեությունը՝

Նորագյուղի անդեզիտաբազալտի հանքավայրի 1-ին
փեղամասում 2024-2025թթ. երկրաբանական
ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 035 - 24
«27» 03 2024թ.

Կոտայքի մարզի Նորագյուղի անդեզիտաբազալտի հանքավայրի 1-ին տեղամասում 2024-2025թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ Փաստաթղթի տեսակը՝	«Բազալտ Բար» ՍՊԸ Երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝ Գտնվելու վայրը՝	Բ Կոտայքի մարզ, Նաիրի համայնք, Ջորավան բնակավայր

Ներածական մաս. Նախնական գնահատման հայտով /այսուհետ՝ հայտ/ նախատեսվում է Կոտայքի մարզի Նորագյուղի անդեզիտաբազալտի հանքավայրի 1-ին տեղամասում 2024-2025թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացում: Անդեզիտաբազալտները նախատեսվում է ուսումնասիրել, որպես շինարարական քար, իսկ թափոնները՝ շինարարական խճի և ավազի արտադրման համար հումքի արդյունահանման նպատակով:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք/՝ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-ին կետի ա) ենթակետի՝ երկրաբանական ուսումնասիրությունները, որպես նախատեսվող գործունեության տեսակ դասակարգվում են Բ կատեգորիայի: Համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մինչև ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ուժի մեջ մտնելը շարունակում են գործել 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի համապատասխան դրույթները: Այսպիսով փորձաքննական գործընթացն իրականացվել է 2014թ. Օրենքի դրույթներին համապատասխան:

Նկարագրական մաս. Համաձայն հայտի՝ Նորագյուղի անդեզիտաբազալտի հանքավայրի 1-ին տեղամասում 2024-2025թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տարածքը գտնվում է Կոտայքի մարզի վարչական տարածքում՝ Եղվարդ ավանից 6.8 կմ դեպի հյուսիս-արևելք և Նոր Գեղի գյուղից 3.1 կմ դեպի հյուսիս-արևմուտք, Բյուրեղավանից 4.8 կմ հյուսիս-արևմուտք, Արզնիից 6.3 կմ հյուսիս-արևմուտք հեռավորությունների վրա:

Վարչական տեսակետից 1-ին տեղամասը ներառված է Նաիրի խոշորացված համայնքի Ջորավան բնակավայրի սահմաններում: Ջորավան գյուղի մոտակա բնակելի շինությունները գտնվում են հայցվող տարածքից 1.8 կմ, արտադրական-արդյունաբերական տարածքները՝



2.3 կմ հեռավորության վրա: Մոտ 1.83 կմ արևելք գտնվում են Նոր Գեղի բնակավայրի արտադրական շինությունները: 3.5 կմ հեռավորության վրա անցնում է Հ-4, 3.1 կմ հեռավորության վրա՝ Հ-6 հանրապետական նշանակության ավտոճանապարհները: Հայցվող տարածքից 0.3 կմ հարավ-արևմուտք և 1.5 կմ հարավ՝ պտղատու այգիներ են: Մոտ 0.94 կմ հեռավորության վրա է գտնվում Նորագյուղի անդեզիտաբազալտի հանքավայրը:

Ծովի մակերևույթից տեղամասը գտնվում է 1453.75-1478.2 մ բացարձակ բարձրության վրա:

1-ին տեղամասի հետախուզվող տարածքի մակերեսը 8.03 հա է, համարվում է վերին պլիոցենի Եղվարդի սարավանդի ընդարձակ լավային ծածկոցի մի մասը: Ծածկոցի մակերևույթը հետախուզված տարածքում անհարթ է և թմբավորված 6-18 մ հարաբերական բարձրություններով: Ընդհանուր առմամբ հետախուզվող տարածքն ունի թեքություն հյուսիս-արևմուտքից - հարավ արևելք ուղղությամբ:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին միոցենի, վերին պլիոցենի, վերին չորրորդական ապարները և ժամանակակից առաջացումները:

Լեռնագրական տեսակետից ուսումնասիրվող հանքավայրի 1-ին տեղամասի շրջանում խոշոր կառուցվածքային միավորները Կոտայքի և Եղվարդի սարահարթերն են:

Համաձայն հայտի՝ ուսումնասիրվող անդեզիտաբազալտների հանքավայրի 1-ին տեղամասի տարածքում բնական մակերևույթային հոսքեր չկան: Հրազդան գետի հունն անցնում է հայցվող տեղամասից 2.7-3.3 կմ արևելք:

Նորագյուղի անդեզիտաբազալտների հանքավայրի 1-ին տեղամասի շրջանի կլիման ցամաքային է, բնութագրվում է որպես չափավոր տաք, չոր: Ամռանը մինչև +39°C, իսկ ձմռան բացարձակ նվազագույնը՝ -33°C: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը 436 մմ է:

Ըստ նախնական հայտի՝ երևակման տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել, ամենամոտ գտնվող սողանքները կազմում են մոտ 7 - 11.45 կմ:

Համաձայն հայտի՝ երկրաբանական հետախուզման բուն տարածքում բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր, պատմամշակութային հուշարձաններ, անտառային տարածքներ չկան: Տեղամասի տարածաշրջանում արձանագրված է ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված միայն մի տեսակ՝ Սոխ Օլթիի, որի աճելավայրը գտնվում է 1-ին տեղամասի տարածքից 1.99 կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքի հողերի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական և այլ գործառնական նշանակության հողեր են:

Ըստ հայտի՝ «Բազալտ Քար» ՍՊ ընկերությունը Նորագյուղի անդեզիտաբազալտի հանքավայրի 1-ին տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագիրը կազմել է՝ հաշվի առնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքը, գեոմորֆոլոգիական ձևը, տարածքի չափերը, դրանց երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները:

Երկրաբանահետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 8.3 հա մակերեսով տարածքում, որը սահմանափակվում է հետևյալ կոորդինատներով (ARM WGS-84 համակարգով)՝

1. 4467472.52, 8461973.41
2. 4468050.99, 8461930.70

12. 4467723.60, 8462119.62
13. 4467718.42, 8462135.76



3. 4468036.38, 8461950.20
4. 4468016.22, 8461975.38
5. 4467991.90, 8462006.64
6. 4467964.47, 8462053.76
7. 4467951.30, 8462078.87
8. 4467943.83, 8462097.92
9. 4467886.32, 8462105.57
10. 4467826.03, 8462101.06
11. 4467815.59, 8462128.84

14. 4467712.67, 8462140.55
15. 4467681.48, 8462146.68
16. 4467654.86, 8462146.82
17. 4467646.54, 8462145.29
18. 4467616.85, 8462117.55
19. 4467582.94, 8462100.18
20. 4467472.26, 8462056.67
21. 4467472.81, 8462015.95
1. 4467472.52, 8461973.41

Համաձայն հայտի տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ 8.3 հա տարածքում, մերկացումների գործիքային տեղադրմամբ տոպո հիմքի վրա:

Համաձայն հայտի հետախուզական ցանցի խտությունն ընտրվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2021թ. օգոստոսի 11-ի թիվ 06-Ն «Օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները սահմանելու մասին» հրամանի պահանջներին համապատասխան:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակն է ուսումնասիրել որպես շինարարական քար «Շինարարական քարեր տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» 100-94 ՀՍ ԳՈՍ-ի տեխնիկական պահանջների, իսկ թափոնները օգտագործել որպես շինարարական խճի և ավազի հումք, որոնք կհամապատասխանեն «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներով շինարարական աշխատանքների համար» 8267-95 և «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-2014 ՀՍ ԳՈՍ-ի տեխնիկական պահանջներին:

Համաձայն հայտի աշխատանքներն իրականացվելու են սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կատարվելու է կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 132-112 մմ տրամագծով:

Նախատեսվում է հորատել 10-30 մետր խորության 12 հորատանցքեր 227.5 մ ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80%, իսկ միջինը 90%:

Հորատանցքերի խորություններն ընտրվել է այն հանգամանքով, որ հետագա հանքի ստորին սահմանը լինի 1448 մ:

Նախագծով նախատեսվում է անցնել 3 հետախուզահոր՝ 19.0 գծմ ընդհանուր խորությամբ: Հետախուզահորերի ընդհանուր մակերեսը կկազմի՝ $6մ^2 \times 3 = 18 մ^2$, իսկ ծավալը՝ $6մ^2 \times 8 + 6մ^2 \times 6 + 6մ^2 \times 5 = 114 մ^3$, այդ թվում դեյուվիալ նստվածքներ՝ $7.2 մ^3$ (հողաբուսական շերտ $1.8մ^3$), ճեղքավորված բազալտներ՝ $14.04 մ^3$:

Հետախուզահորերը նախատեսվում է անցնել օգտակար հանածոյի և ժամանակակից այլուվիալ-դեյուվիալ նստվածքների կոնտակտները հստակեցնելու և ճշտելու նպատակով:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման համար նախատեսվում է տեղամասում կատարել $100 մ^3$ փորձնական արդյունահանման աշխատանքներ թարմ, չհողմահարված ապարներից՝ $10 \times 4.55 \times 2.97 = 135 մ^3$ ծավալով, այդ թվում՝ $100 մ^3$ -ը չհողմահարված, թարմ ապարներից մնացած $35 մ^3$ -ը խիստ ճեղքավորված ապարների ծավալն է: $100 մ^3$ փորձնական հանույթի ծավալով կորոշվի պիտանի բլոկների ելքը:

Այս աշխատանքները կկատարվեն մեխանիկական հորատասեպային եղանակով, բացահանքից մենաքարերի պոկումը կկատարվի մեխանիկական, հորատասեպային եղանակով՝ օգտագործելով բնական ճեղքերը, որոնք կենթարկվեն շտկամշակման՝ 100-94



ՀԱՍ-ի տեխնիկական պահանջներին համապատասխան բլոկների՝ օգտագործելով բուլդոզեր և էքսկավատոր:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում են կատարել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալները հետևյալն են ըստ տեսակների՝ հորատահանուկի փաստագրում – 227.5 մ, հետախուզահորեր – 19 մ, փորձնական բացահանք – 10 մ, ընդամենը – 256.5մ:

Հետախուզահորերի փաստագրման ու նմուշարկման աշխատանքներից հետո նախատեսվում է հետախուզահորերի անցման ժամանակ առաջացած 114 մ³ և նմուշարկումից հետո մնացած 113.4 մ³ (0.6 մ³-ը նմուշների ծավալն է) ծավալով ԱԿԽ կուտակի հետլցնում: Աշխատանքները կատարվելու են ձեռքով՝ առանց լրացուցիչ ծախսերի:

Համաձայն հայտի անդեզիտաազալտները նախատեսվում է ուսումնասիրել որպես շինարարական քար, իսկ թափոնները շինարարական խճի և ավազի արտադրման համար հումք:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, հետախուզահորերից, բացահանքից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատանցքերից առաջինը նմուշարկվելու անընդհատ տիրույթներով, մնացածը ընդհատվող: Հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը կտատանվի 5մ սահմաններում: Հանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 41 նմուշ հանուկի 90% ելքի պայմաններում.
- մենաքարերի վերցնում փորձնական բացահանքից (1 հատ) և հետախուզահորերից (3 հատ): Մենաքարերի ընդհանուր քանակը կկազմի 4 հատ (20x20x20սմ չափսերի),
- քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 2 նմուշ, իսկ քարաբանական կազմի ուսումնասիրման նպատակով՝ 3 նմուշ,
- համախառն նմուշի վերցնում 2 հատ, յուրաքանչյուրը՝ 150 կգ քաշով:

Անդեզիտաբազալտների քիմիական կազմը կորոշվի ըստ 2 նմուշների անալիզի, ֆիզիկամեխանիկական հատկանիշները կուսումնասիրվեն 47 նմուշներով: Նմուշները լրիվ ծրագրով կենթարկվեն փորձարկումների: Քարաբանական և միներալոգական ուսումնասիրությունները կկատարվեն 3 հոլոկների միջոցով:

Երկրաբանահետախուզական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում է իրականացնել համապատասխան դիտարկումներ հետախուզական փորվածքների և հորատանցքերի անցման ընթացքում՝ պարզաբանելու համար տեղամասում առկա գեոդինամիկ երևույթները, ապարների անիզոտրոպությունը, ջրատար հորիզոնների առկայությունը:

Նախատեսվում է 12 հորատման հրապարակների (1 հորատման հրապարակի մակերեսը ընդունվում է 45 մ²) կառուցում մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում բացվող շերտի հզորությունը՝ 0.3 մ 45 մ² x 12= 540 մ²/162 մ³:

Համաձայն հայտի՝ տեղամասում առկա են գրունտային բարեկարգ ճանապարհներ, այդ իսկ պատճառով ճանապարհների կառուցում և վերանորոգում չի նախատեսվում: Կօգտագործվեն գոյություն ունեցող գործող ճանապարհները:

Աշխատանքների ավարտից հետո իրականացվելու է խախտված լանդշաֆտի վերականգնում: Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է փորձնական բացահանքի և հետախուզահորերի անցման և հորատահարթակների կառուցման ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից



հետո յուրաքանչյուր հորատհրապարակի հարևանությամբ կուտակված 13.5 մ³ ծավալով անդեզիտաբազալտների բեկորներով հողային շերտը հետ է փռվելու, հարթեցվելու է, պարարտացվելու է և կատարվելու է հացազգի բույսերի սերմերի ցանք: Հորատհրապարակների կառուցման համար հանված դեյուվիալ ապարների ընդհանուր ծավալը կազմում է 162 մ³, այդ թվում հողաբուսական շերտը՝ 54 մ³: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդհանուր ծավալը կազմում է 173.2 մ³, այդ թվում հորատհրապարակներ՝ 162 մ³, հետախուզահորեր՝ 7.2մ³ և փորձնական բացահանք՝ 4 մ³: Այդ աշխատանքների իրականացման համար ընկերության կողմից կհատկացվի 208800 ՀՀ դրամ:

Համաձայն ժամանակացույցի աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են 2024թ. 2-րդ եռամսյակից մինչև 2025թ. 1-ին եռամսյակը:

Գործունեության իրականացման ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր: Տեխնիկական նպատակներով անհրաժեշտ ջուրը վերցվելու է Կոտայքի ջրանցքից, որի նպատակով ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո ընկերությունը դիմելու է շրջակա միջավայրի նախարարություն՝ ջրօգտագործման թույլտվություն հայցելու նպատակով: Խմելու ջուրը գնվելու է առևտրի կետերից շալցված տարբերակով և աշխատանքները սպասարկող ավտոմեքենայով տեղափոխվելու է աշխատանքների վայր:

Համաձայն հայտի՝ ուսումնասիրության ընթացքում տարածքում առաջանալու են նավթամթերքների և քսայուղերի մնացորդներ 20 և քանակությամբ, իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ մոտ 15 և քանակությամբ և կենցաղային թափոններ: Նավթամթերքների և քսայուղերի, ինչպես նաև կենցաղային թափոնները տեղափոխվելու են ընկերության կողմից համապատասխան պայմանագրերի հիման վրա:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում վերցված բոլոր նմուշների լաբորատոր հետազոտություններն իրականացվելու են հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Համաձայն հայտի՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների հնարավոր բացասական ազդեցությունները կապված են լինելու օդային ավազանի, հողային ռեսուրսների հնարավոր աղտոտման, բուսական և կենդանական աշխարհի, լանդշաֆտային ամբողջականության պահպանման հետ: Դաշտային աշխատանքների կարճատև լինելու հանգամանքով պայմանավորված՝ մեխանիզմների շահագործումից առաջացած վնասակար ծխագազերի, հորատման ընթացքում առաջացող արտանետումները և աղմուկի մակարդակը չեն գերազանցելու սահմանային թույլատրելի նորմերը: Բուսական և կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունները լինելու են աննշան, քանի որ աշխատանքները կատարվելու են բուսական ծածկույթից զուրկ տարածքում, կենդանիների և թռչունների բնադրավայրերից հեռու:

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ:

Նախատեսվում է իրականացնել.

- Տեխնիկայի և ավտոտրանսպորտի լիցքավորումը, յուղերի փոխարինումը, մեքենաների տեխնիկական սպասարկումը կատարվելու է մոտակա բնակավայրերում: Դա կբացառի տեղամասի տարածքի աղտոտումը նավթամթերքներով:



- Աշխատանքների ժամանակ կիրառվող սարքավորումների և մեքենաների վրա արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրերի տեղադրում:

- Փոշենստեցման նպատակով տեղամասին մոտեցնող ճանապարհի ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:

- Կեղտաջրերի հավաքում հորատից զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով՝ պայմանագրային հիմունքերով:

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողություններում, աղբահանության պայմանագրի կնքում:

- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:

- Գործունեության և հարակից տարածքում ընկերության կողմից կատարվելու է մոնիթորինգ /կենսաբազմազանության դիտարկում, տարեկան մեկ անգամ/, առաջնորդվելով ՀՀ կառավարության 2014թ. հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով:

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

- Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն և այլն:

Մշտադիտարկումների կատարման համար նախատեսվում է հատկացնել 500.0 հազ. ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է տարածաշրջանում շինարարական նյութերի պահանջարկի բավարարման նպատակով: Երկրաբանահետախուզական աշխատանքների (դաշտային աշխատանքներ) կատարման ժամանակահատվածը լինելու է կարճատև, ուստի ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղային: Հայտում ներառված են աղմուկի մակարդակի, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, թափոնների կառավարման, խախտված տարածքների ռեկուլտիվացիայի և մոնիթորինգի իրականացման բավարար միջոցառումներ:

Երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի փորձաքննության գործընթացն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Կոտայքի մարզպետարանը, Նաիրիի համայնքապետարանը, Զորավան բնակավայրը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննության ընթացքում հայտը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով Կոտայքի մարզի Նաիրի խոշորացված համայնքի Զորավան բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:



Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:

- Պահպանել հայտով ամրագրված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, ցուցանիշները և նորմերը:

- Ապահովել հայտով նախատեսված խախտված տարածքների ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ անհապաղ տեղեկացնել լիազոր մարմին:

- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքերը՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Բազալտ Քար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Նորագյուղի անդեզիտաբազալտի հանքավայրի 1-ին տեղամասում 2024-2025թթ. երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝



Արմինե Վարդանյան